

Հարցաշար
Պետության և իրավունքի տեսության, Սահմանադրական իրավունքի
առարկաններից պետական քննության
(2017-18 ուս տարվա շրջանավարտների համար)

«Պետության և իրավունքի տեսություն» առարկայի մասով

1. Իրավունքի առաջացման պատճառները:
2. Իրավունքի և իրավական նորմերի ձևավորման պատմական ուղիները:
3. Պետության հասկացությունը և հատկանիշները:
4. Պետության գործառույթներ. հասկացությունը, դասակարգումը:
5. Պետության ներքին գործառույթների հասկացությունը և ընդհանուր բնութագիրը:
6. Պետության արտաքին գործառույթների հասկացությունը և ընդհանուր բնութագիրը:
7. Պետության գործառույթների իրականացման ձևերի և մեթոդների հասկացությունը և տեսակները:
8. Պետության ձև. հասկացությունը, տարրերը:
9. Պետության կառավարման ձև հասկացությունը և դրա տեսակները:
10. Կառավարման հանրապետական ձևի հասկացությունը և տեսակները:
11. Կառավարման միապետական ձևի հասկացությունը և տեսակները:
12. Պետական կառուցվածքի ձև հասկացությունը և դրա տեսակները:
13. Պետաիրավական վարչաձև. հասկացությունը և տեսակները:
14. Պետության կառուցակարգը (մեխանիզմը). հասկացությունը և կառուցվածքը:
15. Պետական ապարատը պետության կառուցակարգում:
16. Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքները:
17. Պետության մարմինները. հասկացությունը, հատկանիշները, դասակարգումը:
18. Քաղաքական համակարգ. հասկացությունը, հիմնական սուբյեկտները:
19. Պետությունը և եկեղեցին: Թեոկրատական, կրոնականացված աշխարհիկ պետություններ:
20. Իրավունքի հասկացությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով:
21. Իրավունքի հասկացությունը և հատկանիշները:
22. Իրավունքի և օրենքի հարաբերակցությունը: Իրավական օրենք հասկացությունը:
23. Իրավահասկացողության տիպերը. իրավաբանական և լեգիստական:
24. Իրավունքի սկզբունքները. հասկացությունը, նշանակությունը, դասակարգումը:
25. Հասարակության իրավական համակարգը. հասկացությունը և կառուցվածքը:
26. Ռոմանագերմանական իրավական ընտանիք:
27. Անգլոսաքսոնական իրավական ընտանիք:
28. Սոցիալիստական իրավական ընտանիք:
29. Կրոնական և ավանդական իրավական ընտանիքներ:
30. Անձի իրավական կարգավիճակը. հասկացությունը, կառուցվածքը և տեսակները:
31. Իրավական պետություն. հասկացությունը և սկզբունքները:
32. Իշխանությունների տարանջատումը որպես իրավական պետության սկզբունք:
33. Սոցիալական պետություն:
34. Սոցիալական նորմերի հասկացությունը և տեսակները:

35. Իրավունքի և այլ սոցիալական նորմերի ընդհանրությունները և առանձնահատկությունները:
36. Իրավունք և բարոյականություն. միասնությունը, տարբերությունը, փոխգործողությունը, հակասությունը:
37. Իրավագիտակցություն. հասկացությունը, կառուցվածքը, տեսակները և մակարդակները:
38. Իրավական մշակույթ (կուլտուրա). հասկացությունը և կառուցվածքը:
39. Իրավական դաստիարակություն. հասկացությունը, ձևերը, մեթոդները:
40. Իրավունքի նորմ. հասկացությունը և հատկանիշները, կառուցվածքը:
41. Իրավունքի նորմի և նորմատիվ ակտի հոդվածի հարաբերակցությունը:
42. Ըստ որոշակիության իրավունքի նորմի դիպոզիցիայի շարադրման եղանակները:
43. Ըստ որոշակիության իրավունքի նորմի սանկցիայի շարադրման եղանակները:
44. Իրավունքի ձև հասկացությունը և ձևերի դասակարգումը:
45. Նորմատիվ ակտերի հասկացությունը և տեսակները:
46. Օրենքներ. հասկացությունը, հատկանիշները, տեսակները:
47. Ենթաօրենսդրական նորմատիվ ակտ. հասկացությունը, հատկանիշները, տեսակները:
48. Նորմատիվ ակտի գործողությունը տարածության, ժամանակի մեջ, ըստ անձանց:
49. Օրենքի հետադարձ ուժը:
50. Իրավաստեղծագործություն. հասկացությունը, սկզբունքները, տեսակները:
51. Նորմատիվ ակտերի համակարգումը. հասկացությունը և տեսակները:
52. Իրավունքի համակարգ. հասկացությունը և կառուցվածքային տարրերը:
53. Իրավական կարգավորման առարկան և մեթոդը:
54. Իրավունքի ճյուղ և ինստիտուտ. հասկացությունը և տեսակները:
55. Իրավահարաբերություններ. հասկացությունը և հատկանիշները:
56. Իրավահարաբերությունների տարրերը. սուբյեկտ, օբյեկտ, բովանդակություն:
57. Իրավահարաբերությունների տեսակները:
58. Իրավահարաբերության ծագման նախադրյալները: Իրավանորմի և իրավահարաբերության հարաբերակցությունը:
59. Իրավահարաբերությունների մասնակիցների իրավասուբյեկտությունը:
60. Սուբյեկտիվ իրավունքներ և իրավական պարտականություններ. հասկացությունը և կառուցվածքը:
61. Իրավահարաբերությունների օբյեկտները. հասկացությունը և տեսակները:
62. Իրավաբանական փաստերի հասկացությունը և դասակարգումը:
63. Իրավունքի կենսագործումը (իրականացումը). հասկացությունը և տեսակները:
64. Իրավունքի նորմերի կիրառման հասկացությունը և փուլերը:
65. Իրավունքի բացերը. հասկացությունը, վերացման ու հաղթահարման եղանակները:
66. Իրավունքի և օրենքի անալոգիա:
67. Իրավաբանական կոլիզիաները և դրանց լուծման եղանակները:
68. Իրավունքի նորմերի մեկանաբանում. հասկացությունը, տեսակները ըստ սուբյեկտների:
69. Իրավունքի նորմերի մեկնաբանման եղանակները:

70. Իրավունքի նորմերի մեկնաբանումը ըստ ծավալի. տառացի, տարածական, սահմանա փակ:
71. Իրավաչափ վարգագիծ. հասկացությունը և տեսակները:
72. Իրավախախտում. հասկացությունը, հատկանիշները, տեսակները:
73. Իրավախախտման իրավաբանական կազմը:
74. Իրավական պատասխանատվություն. հասկացությունը, հատկանիշները:
75. Իրավական պատասխանատվություն. հիմքերը, գործառույթները:
76. Իրավական պատասխանատվություն. տեսակները և սկզբունքները:
77. Իրավական պատասխանատվությունը և պետական հարկադրանքի այլ տեսակները:
78. Օրինականության հասկացությունը և սկզբունքները:
79. Օրինականության երաշխիքները. հասկացությունը և տեսակները:
80. Իրավակարգի հասկացությունը. օրինականության, իրավակարգի և հասարակական կարգի հարաբերակցությունը:

«Սահմանադրական իրավունք» առարկայի մասով

1. Սահմանադրաիրավական նորմերը և ինստիտուտները:
2. Սահմանադրաիրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները:
3. Սահմանադրական իրավունքի աղբյուրները և համակարգը:
4. Սահմանադրական իրավունքի տեղը ՀՀ իրավունքի համակարգում:
5. Սահմանադրության հասկացությունը և բնորոշ գծերը:
6. Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգը:
7. Սահմանադրական իրավունքների, ազատությունների սահմանափակման հիմքերը:
8. Սահմանադրական կարգի հասկացությունը:
9. Օրինականության սկզբունքի սահմանադրական հիմունքները:
10. Տնտեսական կարգի սահմանադրական հիմունքները:
11. Շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման սահմանադրական հիմունքները:
12. Մշակույթի, կրթության, գիտության խթանման, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանության սահմանադրական հիմունքները:
13. ՀՀ պետական լեզուն:
14. ՀՀ քաղաքական համակարգի հասկացությունը և տարրերը:
15. Պետությունը Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում:
16. Կուսակցությունները Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում:
17. Հասարակական միավորումները Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում:
18. Սոցիալական պետության հասկացությունը և բնորոշ գծերը:
19. Իրավական պետության հասկացությունը և բնորոշ գծերը:
20. Ինքնիշխան պետության հասկացությունը և բնորոշ գծերը:
21. Ժողովրդավարական պետության բնութագիրը:
22. Ժողովրդաիշխանության իրականացման ձևերի բովանդակությունը և առանձնահատկությունները:

23. Մարդու և քաղաքացու իրավական վիճակի սկզբունքները:
24. Իրավունքների և ազատությունների պաշտպանության պետության պարտականությունը:
25. Իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրական հիմունքները:
26. Իրավունքների և ազատությունների երաշխիքների հասկացությունը և բովանդակությունը:
27. Իրավունքների և ազատությունների դասակարգումը:
28. Կյանքի իրավունքը:
29. Անձնական ազատությունը:
30. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը:
31. Հավաքների ազատությունը:
32. Տեղեկություններ ստանալու իրավունքը:
33. Կրթության իրավունքը:
34. Ստեղծագործության ազատությունը:
35. Իրավունքների և ազատությունների ինքնապաշտպանությունը, իրավաբանական օգնության և պաշտպան ունենալու իրավունքը:
36. Հանրային ծառայության անցնելու իրավունքը:
37. Ազատ գործելու իրավունքը:
38. Զինված ուժերը և պաշտպանությունը:
39. Սահմանադրական իրավունքների, ազատությունների սահմանափակման հիմքերը:
40. Քաղաքացիության հասկացությունը և սկզբունքները:
41. ՀՀ քաղաքացիության ձեռքբերման հիմքերը և կարգը:
42. ՀՀ քաղաքացիության դադարման հիմքերը:
43. Փախստականների և օտարեկրացիների իրավական վիճակը ՀՀ-ում:
44. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրները:
45. ՀՀ տարածքային կառուցվածքը և պետական ռեժիմը:
46. Կառավարման ձևի հասկացությունը և տեսակները: ՀՀ կառավարման ձևը:
47. ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը:
48. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները:
49. Տեղական ինքնակառավարման հասկացությունը և համակարգը:
50. ՀՀ կառավարությունը պետական կառավարման մարմինների համակարգում:
51. ՀՀ կառավարության կազմավորման կարգը և կառուցվածքը:
52. ՀՀ կառավարության ծրագիրը:
53. Պետական մարմինների տեսակները և սահմանադրաիրավական կարգավիճակը:
54. Ազգային ժողովը, որպես ներկայացուցչական և օրենսդիր մարմին:
55. Ազգային ժողովի կազմակերպման կարգը և կառուցվածքը:
56. Ազգային ժողովի պատգամավորի անձեռնմխելիությունը, լիազորությունների դադարումը և դադարեցումը:
57. Ազգային ժողովի հանձնաժողովները:
58. Ազգային ժողովի լիազորությունները ֆինանսաբյուջետային ոլորտում:

59. Ազգային ժողովի լիազորություններն արտաքին հարաբերությունների, պաշտպանության և ազգային անվտանգության ոլորտներում:
60. Ազգային ժողովի լիազորությունները պետական մարմինների ձևավորման և դրանց նկատմամբ վերահսկողության ոլորտներում:
61. Օրենսդրական նախաձեռնության իրացումը:
62. Պատգամավորության թեկնածուի առաջադրումը, գրանցումը և իրավական վիճակը:
63. Հանրաքվեն, որպես անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտի սահմանադրական հիմքերը:
64. Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացությունը և հարաբերակցությունը:
65. Ընտրություններին ՀՀ քաղաքացիների մասնակցության սկզբունքները:
66. Նախընտրական քարոզչություն:
67. Ընտրողների ցուցակները, ընտրատարածքներ, ընտրական տեղամասեր և տեղամասային կենտրոններ կազմելու կարգը:
68. Ընտրական հանձնաժողովները (տեսակները, կազմակերպման կարգը և իրավական վիճակը):
69. Քվեարկության կազմակերպումը և անցկացումը, ընտրություններում ձայները հաշվելու, քվեարկության արդյունքները որոշելու և դրանք հրապարակելու կարգը:
70. Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրության կարգը:
71. ՀՀ նախագահի իրավական կարգավիճակը պետական իշխանության մարմինների համակարգում:
72. ՀՀ նախագահի ընտրության և նրա լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերն ու կարգը:
73. ՀՀ նախագահի իրավական ակտերը:
74. Դատական իշխանության էությունը և հատուկ սկզբունքները:
75. Դատական սահմանադրական վերահսկողության ձևերը:
76. ՀՀ դատական իշխանության մարմինների համակարգը, կազմակերպման և գործունեության կարգը:
77. Դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակը:
78. ՀՀ դատախազության կազմակերպման և իրավասության սահմանադրական հիմունքները:
79. Փաստաբանական ծառայությունը և դատական իշխանությանն աջակցող մյուս մարմինները:
80. Սահմանադրական դատարանի կազմավորման կարգը, սահմանադրական դատավարության ընթացակարգը, Սահմանադրական դատարանի ակտերը:

Հանձնարարվող հիմնական գրականություն
«Պետության և իրավունքի տեսություն» առարկայի մասով

1. Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն: Երևան, 2001:
2. Ա. Գ. Վաղարշյան «Պետության և իրավունքի տեսություն -1», Դասախոսություններ, Երևան, 2016:
3. Ա.Գ. Վաղարշյան «Պետության և իրավունքի տեսություն -2», Դասախոսություններ, Երևան, 2017:

4. Խրոպանյուկ Վ.Ն. Պետության և իրավունքի տեսություն: Երևան, 1997:
5. Теория государства и права. Учебник государства и права. Учебник. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова., М., 2006.
6. Теория государства и права. Курс лекции. Под ред. Н.И. Матузова и АС.В. Малько. М., 1999.

«Սահմանադրական իրավունքի» առարկայի մասով

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Գիրք առաջին (դասագիրք ԲՈՒՀ-երի համար), 6-րդ լրամշակված հրատարակություն, Ն.Ա. Այվազյանի պատ. խմբագրությամբ, Եր.: Տիգրան Մեծ, 2016, 416 էջ:
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Գիրք երկրորդ (դասագիրք ԲՈՒՀ-երի համար), 6-րդ լրամշակված հրատարակություն, Ն.Ա. Այվազյանի պատ. խմբագրությամբ, Եր.: Տիգրան Մեծ, 2016, 400 էջ:
3. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը (ուղեցույց-ձեռնարկ), Գ. Դանիելյան, Ա. Գյուլումյան, Հ. Նազարյան, Վ. Այվազյան և Հ. Ենգոյան, ընդհանուր խմբագրությամբ Գ. Դանիելյանի, Երևան, 2016, հատոր 1, էջ 943:
4. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն) / Գ.Բ. Դանիելյան, Վ.Ա. Այվազյան, Ա.Ա. Մանասյան. – Եր.: Հայրապետ հրատ., 2015. - 240 էջ:
5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի. Երևան: «Իրավունք», 2010, 1086 էջ:

**Պետության և տեսության ու պատմության
ամբիոնի վարիչ Ա.Գ. Վաղարշյան**

**Սահմանադրական իրավունքի
ամբիոնի վարիչ Գ.Բ. Դանիելյան**